ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/07»

ք.Երևան «20» «02» 2017թ.

ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, դեմս տնօրենի ժ/պ Գ. Ներսիսյանի, որը գործում է պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Ռաֆայել Աբրահամյանը, պետական հաշվառման համար՝ 282.11796, նույնականացման քարտ՝ 000688457, տրված՝ 005-ի կողմից, 05.04.2013թ.-ին, սոց.քարտ՝ 2403880159 (այսուհետև՝ Կարարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1): Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է մատակարարման ժամկետի խախտում:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **150 000 (մեկ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի Հավելված №2-ով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված

դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածներ 1; 2; 3 և 3.1 հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10. Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ	**Ա/Ձ Ռաֆայել Աբրահամյան**
ք. Երևան, Արմենակյան 129	ՀՀ, ք.Երևան, Միկոյան 8 բն. 35
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	**Նույնականացման քարտ՝ 000688457**
ՀՀ 900000900648	Տրված 005 կողմից, 05.04.2013թ.
ՀՎՀՀ 01573524	Սոց. Քարտ 2403880159
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի պաշտոնակատար	Պրոմեթեյ բանկ ՓԲԸ
Գ. Ներսիսյան	ՀՀ 1660002198560100
	ՀՎՀՀ 25305521
	Ռաֆայել Աբրահամյան
(ստորագրություն)	(ստորագրություն
Կ.Տ.	

Հավելված №1
«20» «02» 2017թ. կնքված
№«ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/07» պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ծառայությունների անվանումները	Չափման միավորը
	Համակարգչի	
1.	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում:	հատ
2.	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
3.	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler	հատ
4.	CPU-ի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ
5.	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ Պ4 Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ(Cooler for CPU P4 Intel original),	հատ
6.	Համակարգչային պահարանի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
7.	Համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ Համակարգչային պահարան 350Վտ սնուցման բլոկով(With PS 350W),	հատ
8.	Համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ Համակարգչային պահարան 450Վտ սնուցման բլոկով(With PS 450W),	հատ
9.	Համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ Համակարգչային պահարան 550Վտ սնուցման բլոկով(With PS 550W),	հատ
10.	MB նորոգում	հատ
11.	MB փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
12.	MB փոխարինում ներառյալ 478 սոկետ ՎԳԱ օն բորդ, (478 socket, VGA on board),	հատ
13.	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 945 չիպսեթ,ՊՍԻ չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 945 chipset, PCI-Exp)	հատ
14.	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 31 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 31 chipset, PCI-Exp)	հատ
15.	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 35 chipset, PCI-Exp)	հատ
16.	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 43 չիպսեթ,ՊՍԻ(MSI Intel 43 chipset, PCI)	հատ
17.	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ(MSI Intel 45 chipset, PCI)	հատ
18.	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 945 չիպսեթ, ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 945 chipset, PCI-Exp)	հատ
19.	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 31 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 31 chipset,PCI-Exp)	հատ
20.	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 35 chipset, PCI-Exp)	հատ
21.	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 43 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 35 chipset, PCI-Exp)	հատ
22.	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 38 chipset, PCI-Exp)	հատ
23.	CPU փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
24.	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4/2.4գ 533/800 մhg 478 փին (CPU P4/2,4g 533/800 mhz 478pin),	հատ
25.	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4/3.0գ 800մhg 478 փին (CPU P4/3.0g 800mhz 478pin),	հատ
26.	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.0ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.0GHZ 1M 800MHZ),	հատ
27.	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.2ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.2GHZ 1M 800MHZ),	հատ
28.	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.4ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.4GHZ 1M 800MHZ),	հատ
29.	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Դ 820 (2,8ԳՀg) ԼՋԱ775, 2x1024, 800ՄՀg (Dual Core D 820 (2,8GHz) LGA775, 2x1024, 800MHz),	հատ
30.	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2180 (1.8ԳՀg), 1024, 800ՄՀg (Dual Core E2180 (1.8GHz), 1024, 800MHz),	հատ
31.	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2210 (2.2ԳՀg), 1024, 800ՄՀg (Dual Core E2210 (2.2GHz), 1024, 800MHz)	հատ
32.	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2220 (2.4ԳՀg), 1024, 800ՄՀg (Dual Core E2220 (2.4GHz), 1024, 800MHz),	հատ
33.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7300 (2,66ԳՀg) , 3072, 1066ՄՀg (Core 2 Duo E7300 (2,66GHz), 3072, 1066MHz),	հատ
34.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7400 (2,8ԳՀg), 3072, 1066ՄՀg (Core 2 Duo E7400 (2,8GHz), 3072, 1066MHz),	հատ
35.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7500 (2,93ԳՀg) , 3072, 1066ՄՀg (Core 2 Duo E7500 (2,93GHz), 3072, 1066MHz),	հատ
36.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե8300 (2,8ԳՀg), 6144, 1333ՄՀg (Core 2 Duo E8300 (2,8GHz), 6144, 1333MHz),	հատ
37.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե8500 (3.16ԳՀg) , 6144, 1333ՄՀg (Core 2 Duo E8500 (3,16GHz), 6144, 1333MHz),	հատ
38.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք8200 (2.66ԳՀg) , 4096, 1333ՄՀg (Core 2 Quad Q8200 (2,66GHz), 4096, 1333MHz),	հատ
39.	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք9400 (2.66ԳՀg) , 6144, 1333ՄՀg (Core 2 Quad Q9400 (2,66GHz), 6144, 1333MHz),	հատ

40.	RAM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
41.	RAM փոխարինում ներառյալ ՍԴՌԱՄ 256ՄԲ ՊՍ 133 (SDRAM 256MB PC 133),	հատ
42.	RAM փոխարինում ներառյալ ՍԴՌԱՄ 256ՄԲ ՊՍ 100 (SDRAM 256MB PC100),	հատ
43.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ400 512ՄԲ ՊՍ3200 (DDR400 512MB PC3200),	հատ
44.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ400 1024ՄԲ ՊՍ3200 (DDR400 1024MB PC3200),	հատ
45.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 512Մ 533ՄՀՑ ՊՍ4200 (DDR2 512M 533MHZ PC4200),	հատ
46.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1ԳԲ 533ՄՀՑ ՊՍ4200 (DDR2 1GB 533MHZ PC4200)	հատ
47.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 256Մ 667/800ՄՀՑ (DDR2 256M 667/800MHZ),	հատ
48.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 512Մ 667/800ՄՀՑ (DDR2 512M 667/800MHZ),	հատ
49.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ),	հատ
50.	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՑ (DDR2 2048M 667/800MHZ),	հատ
51.	SVGA փոխարինում կամ տեղադրում(առանց պահեստամասերի)	հատ
52.	SVGA փոխարինում ներառյալ ԷյՋիՊի 256Մբ(AGP 256Mb)	հատ
53.	SVGA փոխարինում ներառյալ ԷյՋիՊի 512Մբ(AGP 512Mb)	հատ
54.	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 256Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Ati Radeon 256Mb PCI Exp)	հատ
55.	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 512Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Ati Radeon 512Mb PCI Exp)	հատ
56.	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 1Գբ ՊիՍիԱյ-Էքսպ(Ati Radeon 1Gb PCI Exp)	հատ
57.	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ 256Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GS 256Mb PCI Exp)	հատ
58.	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ 512Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GS 512Mb PCI Exp)	հատ
59.	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 256Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GT 256Mb PCI Exp)	հատ
60.	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 512Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GT 512Mb PCI Exp)	հատ
61.	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 1Գբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GT 1Gb PCI Exp)	հատ
62.	HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
63.	HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 80գբ 7200ռպմ (HDD 80GB 7200RPM),	հատ
64.	HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 160գբ 7200ռպմ (HDD 160 GB 7200RPM),	հատ
65.	HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 80գբ/7200ռպմ/ՍԱՏԱ (HDD 80GB/7200/SATA),	հատ
66.	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 160գբ ՍԱՏԱ/7200 (HD- 160 GB SATA/7200),	հատ
67.	HDD փոխարինում ներառյալՀԴ 250Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ, 8ՄԲ (HDD 250 Gb SATA , 7200 rpm, 8MB),	հատ
68.	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 320Գբ ՍԱՏԱ , 7200ռպմ (HDD 320 Gb SATA , 7200 rpm),	հատ
69.	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 500 Gb SATA, 7200 rpm),	հատ
70.	CD-RW, DVD-RW նորոգում	հատ
71.	CD-RW, DVD-RW փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
72.	DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW),	հատ
73.	MODEM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
74.	MODEM փոխարինում ներառյալ 56կ ներքին ձայնային (56K INTERNAL),	հատ
75.	MODEM փոխարինում ներառյալ Արտաքին 56կ Սերիալ (EXTERNAL 56k SERIAL),	հատ
76.	Սնուցման բլոկի նորոգում	հատ
77.	Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
78.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 350Վտ (Power suply unit for P4 Case 350w),	հատ
79.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450Վտ (Power suply unit for P4 Case 450w),	հատ
80.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 550վ (Power suply unit for P4 Case 550W),	հատ
81.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 650վ (Power suply unit for P4 Case 650W),	հատ
82.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 850վ (Power suply unit for P4 Case 850W),	հատ
83.	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 1000վ (Power suply unit for P4 Case 1000W),	հատ
84.	Ցանցային քարտի տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
85.	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Օրանժ (Orange NIC 10/100),	հատ
86.	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Դ-լինկ (D-link 10/100),	հատ
87.	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000),	հատ
88.	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ վայրլեսս 11մբ(Wireles NIC 11mb),	հատ
	Նոթբուքի	
89.	CPU, RAM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
90.	HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ

91.	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 80գբ 5400 նոթբուքի համար (TOSHIBA,80GB,5400 for notebook),	հատ
92.	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 160գբ 5400ռպմ նոթբուքի համար (TOSHIBA 160GB 5400RPM for notebook),	հատ
93.	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 250գբ 5400ռպմ նոթբուքի համար (TOSHIBA 250GB 5400RPM for notebook),	հատ
94.	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 320գբ 5400ռպմ նոթբուքի համար (TOSHIBA 320GB 5400RPM for notebook),	հատ
95.	RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 512ՄԲ (SODIMM DDR2 512MB)	հատ
96.	RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 1ԳԲ (SODIMM DDR2 1GB)	հատ
97.	RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 2ԳԲ (SODIMM DDR2 2GB)	հատ
	Մոնիտորի	
98.	TDKC փոխարինում առանց TDKC	հատ
99.	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 15"	հատ
100.	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 17"	հատ
101.	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 19"	հատ
102.	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 20"	հատ
103.	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 22"	հատ
104.	ԼՍԴ-ի մատրիցայի փոխարինում	հատ
105.	Վերանորոգում (ֆոկուսի կարգավորում,գունահամատեղող մեխանիզմի կարգաբերում)	հատ
106.	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	հատ
	Անխափան սնուցման սարք	
107.	Ղեկավարող սալիկի վերանորոգում	հատ
108.	Մարտկոցի փոխարինում (առանց Մարտկոցի)	հատ
109.	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/4Ա	հատ
110.	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/7Ա	հատ
111.	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/17Ա	հատ
112.	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/24Ա	հատ
	Սկաների	
113.	Վերանորոգում (առանց պահեստամասերի)	հատ
114.	Լամպի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
115.	Լամպի փոխարինում ներառյալ լամպը Ա4	հատ
	Համակարգչային ցանցի	
116.	Սվիչ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ
117.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 8 պորտ Օրանժ (Orange SWITCH 10/100 8 PORT),	հատ
118.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 16 պորտ Օրանժ (Orange SWITCH 10/100 16 PORT),	հատ
119.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 24 պորտ Օրանժ (Orange SWITCH 10/100 24 PORT),	հատ
120.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 8 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100 8 PORT),	հատ
121.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100 16 PORT),	հատ
122.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100 24 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100 24 PORT),	հատ
123.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 5 պորտ Օրանժ (Orange SWITCH 10/100/1000 5 PORT),	հատ
124.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 8 պորտ Օրանժ (Orange SWITCH 10/100/1000 8 PORT),	հատ
125.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 16 PORT),	հատ
126.	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 24 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 24 PORT),	հատ
127.	Մալուխի անցկացում (գծամետր առանց մալուխի)	հատ
128.	Մալուխի անցկացում ներառյալ Մալուխի գինը (գծամետր)	հատ
	Լազերային տպիչի	
129.	Լիցքավորում (լազերային տպիչների առանց տոների)	հատ
130.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1005/1006/1505(Քենոն 712)/1505, (HP LJ 1005/1006/1505 (Canon 712)/1505,	հատ
131.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5L/6L (Քենոն ԵՊ Ա)/1100 (Քենոն ԵՊ 22), 1200 (Քենոն ԵՊ 25) /1300/1150/1160/1320/2015, (HP LJ 5L/6L(Canon EP A)/HP LJ 1100(Canon EP 22) /HP LJ 1200(Canon EP 25)/1300/1150/1160/1320/2015),	հատ
132.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քենոն ԵՊ 26/27/ՖԻքս9/10 (Canon EP 26/27,FX9/10),	հատ
133.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 (HP LJ 1010,1012,1015, 1018, 1020, 1022 Q2612A (Canon 303/703))	հատ
134.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5Պ/6Պ (HP LJ 5P/6P), լազերային տպիչի համար	հատ

135.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4000/4050 (HP LJ 4000/4050), լազերային տպիչի համար	հատ
136.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2100/2200 (HP LJ 2100/2200), լազերային տպիչի համար	հատ
137.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2300 (HP LJ 2300), լազերային տպիչի համար	հատ
138.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոներըՀՊ ԼՋ 3005 (HP LJ 3005),	հատ
139.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 2420/2430 (HP LJ 2420/2430), լազերային տպիչի համար	հատ
140.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4L/4Պ (HP LJ 4L/4P), լազերային տպիչի համար	հատ
141.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4/4+/5 (HP LJ 4/4+/5), լազերային տպիչի համար	հատ
142.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4100 (HP LJ 4100), լազերային տպիչի համար	հատ
143.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4200 (HP LJ 4200), ,լազերային տպիչի համար	հատ
144.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոներըՀՊ ԼՋ 4300 (HP LJ 4300), ,լազերային տպիչի համար	հատ
145.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4350 (HP LJ 4350), ,լազերային տպիչի համար	հատ
146.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 5000 /5100/5200 (HP LJ 5000/5100/5200),	հատ
147.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 8100/8150 (HP LJ 8100/8150),	հատ
148.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 1600/2600 (HP LJ 1600/2600), , լազերային տպիչի համար	հատ
149.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոներըՀՊ ԼՋ 2500/2550 (HP LJ 2500/2550),	հատ
150.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 3500/3550/3600 (HP LJ 3500/3550/3600),	հատ
151.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները ՀՊ ԼՋ 4600/4700 (HP LJ 4600/4700),	հատ
152.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քսերոքս Պ8ե/Պ16ե/3200/5400 (Xerox P8e/P16e/3200/5400),	հատ
153.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Էպսոն ԵՊԼ 6200 (Epson EPL 6200),	հատ
154.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Էպսոն Ց900/1100/1900 (Epson C900/1100/1900)	հատ
155.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Լեքսմարկ Ե250/260 (Lexmark E250/260)	հատ
156.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Բրազեռ ՊԼ1240 (Brother PL1240)	հատ
157.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Սամսունգ ՄԼ 1210/1610 (Samsung ML 1210/1610)	հատ
158.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Դելլ 1720 (Dell 1720)	հատ
159.	Լիցքավորում լազերային տպիչների (սև) ներառյալ քարթրիջի չիպը,	հատ
160.	Լիցքավորում լազերային տպիչների (գունավոր) ներառյալ քարթրիջի չիպը,	հատ
161.	Վերանորոգում (առանց պահեստամասերի)	հատ
162.	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (առանց թերմոթաղանթի)	հատ
163.	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ թերմոթաղանթ (HP/Canon)	հատ
164.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
165.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ (HP/Canon)	հատ
166.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
167.	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ (HP/Canon)	հատ
168.	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման (առանց պահեստամասերի)	հատ
169.	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Laser Jet ՀՊ ԼՋ 1005/1006/1505(Քենոն 712)/1505, (HP LJ 1005/1006/1505(Canon 712)/1505,	հատ
170.	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ Laser Jet 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000(Canon LBP 800/810/1120/2900/1210)	հատ
171.	Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Կարատրոնը Laser Jet HP 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000(Canon LBP 800/810/1120/2900/1210)	հատ
172.	Մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը Laser Jet ՀՊ ԼՋ 1005/1006/1505(Քենոն 712)/1505, (HP LJ 1005/1006/1505(Canon 712)/1505,	հատ
173.	Մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը Laser Jet HP 1100/5L/6L/4L/4P/1200/1150/1300/2100/4000(Canon LBP 800/810/1120/2900/1210)	հատ
174.	Մաքրող դանակի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
175.	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ (HP LJ, Canon LBP)	հատ
176.	Բաժանիչ հարթակի փոխարինում	հատ
177.	Բաժանիչ հարթակի փոխարինում ներառյալ Բաժանիչ հարթակ (HP LJ ,Canon LBP)	հատ
178.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում	հատ
179.	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ ,Canon LBP)	հատ
	Թանաքաշիթային տպիչի	
180.	Վերանորոգում (առանց պահեստամասերի)	հատ
181.	Լիցքավորում սև ներկով 10 մլ և պակաս քանակով,	հատ
182.	Լիցքավորում գունավոր ներկով 10 մլ և պակաս քանակով,	հատ

183.	Լիցքավորում սև ներկով 10-20 մլ քանակով,	հատ
184.	Լիցքավորում գունավոր ներկով 10-20 մլ քանակով,	հատ
185.	Լիցքավորում սև ներկով 20 մլ-ից ավել քանակով,	հատ
186.	Լիցքավորում գունավոր ներկով 20 մլ-ից ավել քանակով,	հատ
	Պատճենահանող սարքի	
187.	Վերանորոգում (առանց պահեստամասերի) սև	հատ
188.	Վերանորոգում (առանց պահեստամասերի) գունավոր	հատ
189.	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները Քենոն ՖՍ (Canon FC),	հատ
190.	Տոների Լիցքավորում ներառյալ Քենոն Ջ-1, 1215/1520/6216/6317 (Canon G-1, 1215/1520/6216/6317), պատճենահանի համար	հատ
191.	Տոների Լիցքավորում ներառյալ Քենոն NP7161/iR1600/iR2016 (Canon NP7161/iR1600/iR2016), պատճենահանի համար	հատ
192.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
193.	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600	հատ
194.	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon 1018/2016/2018	հատ
195.	Վառարանի ռեզինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018	հատ
196.	Վառարանի ռեզինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon 6012/6512/1018/1022	հատ
197.	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
198.	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ֆետրե լիսեռ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018	հատ
199.	Թմբուկի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
200.	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon FC	հատ
201.	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon 1215/6216/6317/1520	հատ
202.	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon 6012/6512/1018/1022	հատ
203.	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon 7161/1600/2016/2018	հատ
204.	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ Canon 1215/6216/6317/1520/7161/1600/2016/2018	հատ
205.	Սքաների լամպի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
206.	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A4 ,	հատ
207.	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A3 լումինիսցենտային,	հատ
208.	Վառարանի լամպի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
209.	Վառարանի լամպի փոխարինում ներառյալ Լամպը	հատ
210.	Վառարանի ատամնանիվի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
211.	Վառարանի ատամնանիվի փոխարինում ներառյալ ատամնանիվը	հատ
212.	Շարժիչի շարժաբերի ատամնանիվի փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ
213.	Շարժիչի շարժաբերի ատամնանիվի փոխարինում ներառյալ ատամնանիվը	հատ
214.	Կարոտրոնի բլոկի փոխարինում	հատ
215.	Կարոտրոնի լարի փոխարինում	հատ

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը
2017թ. փետրվար	2017թ. դեկտեմբեր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ք. Երևան, Արմենակյան 129
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900000900648
ՀՎՀՀ 01573524
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի պաշտոնակատար
Գ. Ներսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Ռաֆայել Աբրահամյան
ՀՀ, ք.Երևան, Միկոյան 8 բն. 35
Նույնականացման քարտ՝ 000688457
Տրված 005 կողմից, 05.04.2013թ.
Սոց. Քարտ 2403880159
Պրոմեթեյ բանկ ՓԲԸ
ՀՀ 1660002198560100
ՀՎՀՀ 25305521
Ռաֆայել Աբրահամյան

(ստորագրություն

Հավելված №2
«20» «02» 2017թ. կնքված
№«ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/07» պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից, ընդ որում (աճողական կարգով)՝				
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը Տարի
1	Համակարգչային տեխնիկայի տեղադրման ծառայություններ	15000	50000	90000	150000	150000
	Ընդամենը	**15000**	**50000**	**90000**	**150000**	**150000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ք. Երևան, Արմենակյան 129
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900000900648
ՀՎՀՀ 01573524
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրենի պաշտոնակատար
Գ. Ներսիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Ռաֆայել Աբրահամյան
ՀՀ, ք.Երևան, Միկոյան 8 բն. 35
Նույնականացման քարտ՝ 000688457
Տրված 005 կողմից, 05.04.2013թ.
Սոց. Քարտ 2403880159
Պրոմեթեյ բանկ ՓԲԸ
ՀՀ 1660002198560100
ՀՎՀՀ 25305521
Ռաֆայել Աբրահամյան

(ստորագրություն

Հավելված №3
«20» «02» 2017թ. կնքված
№«ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/07» պայմանագրի

Պատվիրատու
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011064087
ՀՎՀՀ 01573524

Պայմանագրի կողմ
Ա/Ձ Ռաֆայել Աբրահամյան
ՀՀ, ք.Երևան, Միկոյան 8 բն. 35
Հ/Հ 1660002198560100
ՀՎՀՀ 25305521

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Պետության կարիքների համար Համակարգչային տեխնիկայի տեղադրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «20» «02» 2017թ.

Պայմանագրի համարը՝ №«ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/07»

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի «Բյուջետային ծրագրերի իրականացման բաժնի պետի ժ/պ Մ.Թովմասյանի, և Պայմանագրի կողմն՝ ի դեմս Ա/Ձ Ռաֆայել Աբրահամյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
Պայմանագրի Ռ. Աբրահամյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն

Հավելված №3.1
«20» «02» 2017թ. կնքված
№«ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/07» պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ա/Ձ Ռաֆայել Աբրահամյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ «20» «02» ին կնքված №«ՀՀ-ԲԾ-ԾՁԲ-17/07» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2017 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն